ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՀԾՁԲ-1/1-1

ք. Երևան 19.04.2019թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ -ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Ռ. Յիրիկյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Վաճառող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 13 500 000 (տասներեք միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների

փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

5.8 Սույն պայմանագիրը լուծել միակողմանի, եթե լրացել է կատարողին տրված լիցենզիայի գործողության ժամկետը:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը

Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Սույն պայմանագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում .ՀՀ ՋՈՒ ԿԱՊԻ ԵՎ ԱԿՀ վարչությունը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011127066
ՀՎՀՀ 02522157
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Ս. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ
ՀՀ,ք. Երևան, Արգիշտի 4/1
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2470113333300
ՀՎՀՀ 01551651

ՏՆՕՐԵՆ

Ռ. ՅԻՐԻԿՅԱՆ

Հավելված N 1

N ԳՀԾՁԲ-1/1-1 *ծածկագրով պայմանագրի*

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ինտերնետային ծառայության մատուցում (համացանցային ծառայություններ մատուցողներ (isp)

Հ/հ	Ստորաբաժանում		Տեղակայում	ԻՆՏԵՐՆԵՏ Արագություն, Մբ/վ	Հասցե
1	10037	ՊՆ Համալիր	ք. Երևան	226	Բագրևանդի 5
2	19450	ՊՆ ազգային ռազմավարական համալսարան	ք. Երևան	10	Երզնկյան 75
3	ՏՀԿ	Հանրապետական զինկոմիսարիատ	ք. Երևան	10	Ազատության 2ա
4	59559	ՊՆ ռազմական ավիացիոն համալսարան	ք. Երևան	10	Արշակունյաց 87 ա
5	24236	ՊՆ Ռազմական համալսարան	ք. Երևան	10	Շոպրոնի 77
6	10724	ՊՆ ռազմական ոստիկանություն	ք. Երևան	10	Ծ.Իսակովի 18/10
7	95532	Խաղաղապահ զորամաս	ավ. Բալահովիտ	5	ավ. Բալահովիտ
8	42285	ՊՆ Ենթասպաների դպրոց	ք. Երևան	5	Թևոսյան 14
9	90999	ԳՇ ստանդարտման և չափաբանության բաժին	ք. Երևան	2	Ծ.Իսակովի 22
10	22059	ԳՇ ռազմական հաղորդակցությունների բաժին	ք. Երևան	2	Տիգրան Մեծի 58
11	80088	ՌԷՊ զորամաս	ք. Աշտարակ	2	Գիտավան
12	14746	ՊՆ պահպանման և սպասարկման գունդ	ք. Երևան	2	Ծարավ Աղբյուրի 54
13	14705	ՊՆ ռազմատեղագրական կենտրոն	ք. Երևան	2	Ծարավ Աղբյուրի 54
14	41096	ՌՔԿՊ զորամաս	ք. Էջմիածին	2	ք. Էջմիածին
15		Հասարակական խորհուրդ	ք. Երևան	5	Մոսկովյան 5
16	26338	Մշակույթալուսավորչական միջոցների նորացման բազա	ք. Երևան	2	Ք.Երևան, Աջափնյակ համայնքի Լենինականի փողոցի
17	18120	"Լեռնային Հայաստան" առողջարան	ք. Դիլիջան	10	ՊՆ "Լեռնային Հայաստան" տուն առողջարան
18	60925	Ուսումնական զորամաս	ք. Արմավիր	2	Զինավան
19	45529	զորավարժարան	ք. Արմավիր	2	Միյասնիկյան ավան
20	16396	ԲԿ	ք. Գորիս	10	Գորիս քաղաքի Անկախության փողոցի թիվ 60
21	60369	զորամաս	ք. Գորիս	2	ՀՀ, Սյունիքի մ. Գորիս ք. Սյունիքի փ. N 3 միջ. դպրոցի հարևանությամբ գտնվող շենք-շինություններ (Գորիս-1)
22	40861	զորամաս	ք. Կապան	2	ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաքի Գործարանային փողոցի վրա գտնվող Կապան-2 զորամաս
23	54122	զորամաս	ք. Կապան	2	ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաքի Գդ.Արզումանյան 1 հասցեում գտնվող Կապան-1 զորամաս
24	54809	զորամաս	ք. Գորիս	2	ք. Գորիս
25	28233	ԲԿ	գ. Կարճաղբյուր	10	գ. Կարճաղբյուր
26	52258	զորամաս	ք. Քարվաճառ	2	ք. Քարվաճառ
27	75937	զորամաս	բն.Չոփոլու	2	բն.Չոփոլու
28	59016	զորամաս	ք. Վարդենիս	2	Գեղարքունիքի մարզի Սոտք համայնքի Կենտրոնական փող. 1 նրբ. N 1 գտնվող "Սոտք-1" զինավան
29	61091	զորամաս	ք. Վարդենիս	2	Սոտք-1ե զինավան
30	25836	զորամաս	ք. Ճամբարակ	2	ք. Ճամբարակ
31	20644	զորամաս	Կարճաղբյուր	2	Կարճաղբյուր
32	28418	զորամաս	Կարճաղբյուր	2	Կարճաղբյուր

33	37082	ԲԿ	ք. Վանաձոր	10	Տերյան փողոց,Զինավան 2
34	51191	զորամաս	ք. Իջևան	2	ՀՀ Տավուշի մարզի (Իջևան) Գետահովիտ համայնքում գտնվող զորամաս
35	51036	զորամաս	ք. Բերդ	2	Գարեգին Նժդեհ 70
36	41507	զորամաս	ք. Դիլիջան	2	Թբիլիսյան խճուղի
37	28073	զորամաս	ք. Իջևան	2	ք. Իջևան, Կրիվոյ
38	27229	զորամաս	ք. Նոյեմբերյան	2	ք. Նոյեմբերյան
39	21127	զորամաս	ք. Մեհրաբ	2	ք. Մեհրաբ
40	81151	զորամաս	ք. Դիլիջան	2	Թբիլիսյան խճուղի
41	40133	զորամաս	ք. Վանաձոր	2	Վանաձոր
42	63853	զորամաս	ք. Վանաձոր	2	Վանաձոր
43	27527	ԲԿ	ք. Եղեգնաձոր	2	ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր քաղաքում գտնվող Եղեգնաձոր-1 զորամաս
44	60913	զորամաս	ք. Սիսիան	2	ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան քաղաքի Շիրակի փող. N 3
45	30515	զորամաս	ք. Եղեգնաձոր	2	ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր քաղաքում գտնվող Եղեգնաձոր-1 զորամաս
46	37564	զորամաս	ք. Սիսիան	2	գ.Նորավան
47	50869	զորամաս	ք. Մեղրի	2	Լեոնիդ Հովակիմյանի անվ.փողոց
48	70179	զորամաս	ք. Վայք	2	Երկրաբանների փողոց
49	28920	ԲԿ	ք. Երևան	10	Քանաքեռ ավան
50	95532	Խաղաղապահ զորամաս	ք. Երևան	5	Նուբարաշեն
51	58831	զորամաս	ք. Արարատ	2	Բանավան
52	69334	զորամաս	գ.Գուսանագյուղ	2	գ.Գուսանագյուղ
53	43755	զորամաս	քն. Զոբանքարա	2	Զինավան 5
54	32236	զորամաս	ք. Մարտունի	2	Մխիթար Հերացի 7
55	26040	զորամաս	քն. Զոբանքարա	2	Զինավան 5
56	70839	զորամաս	ք. Արթիկ	2	Շիրակի մարզ, ք.Արթիկ Ս.Դավթի թիվ 10 հասցեում գտնվող 'Արթիկ-1' զինավան
57	54850	զորամաս	գ. Մուղնի	2	Մուղնի
58	83117	զորամաս	ք. Գորիս	2	10կմ Սդղի-Գյոլ
59	32822	զորամաս	ք. Երևան	2	Էրեբունի օդանավակայան
60	53661	զորամաս	ք. Գյումրի	2	Գյումրի քաղաքի Կոմիտասի փողոցի վրա գտնվող Գյումրի-60 զորամս
61	55565	զորամաս	ավ. Նուբարաշեն	2	7-րդ փողոց
62	55076	զորամաս	ավ. Բալահովիտ	2	ՀՀ Կոտայքի մարզի Բալահովիտ համայնքում գտնվող «Բալահովիտ-2» զորամաս
63	55035	զորամաս	ք. Գյումրի	2	Լալայան 19
64	51556	զորամաս	ք. Ստեփանավան	2	Գարեգին Նժդեհ 71
65	15166	զորամաս	գ. Մերձավան	2	ավ.Մերձավան
66	79512	զորամաս	գ. Պառոյան	2	Պառոյան
67	45077	զորամաս	ք. Եղվարդ	2	Կոտայքի մարզի Եղվարդ քաղ. համայնքում գտնվող 'Եղվարդ-1' զինավան
68	79209	զորամաս	ք. Գորիս	2	զինապահեստներ
69	72207	զորամաս	Թեժ Լեռ	2	Վանաձոր Թեժ Լեռ
70	31549	զորամաս	ք. Երևան	2	Ծարավ Աղբյուրի 54
71	24923	զորամաս	ք. Երևան	2	Երևան քաղաքի Նուբարաշեն 2-րդ զինավան հասցեում գտնվող զորամաս
72	25149	զորամաս	ք. Երևան	2	Մոսկովյան 5
73	53620	զորամաս	գ. Փամբակ	2	Լոռու մարզի, Փամբակ և Քարաշամբ համայնքների վարչական տարածքում գտնվող

					'Փամբակ-1' զինավան
74	98360	զորամաս	ք. Երևան	2	Արցախի 61
75	57454	զորամաս	ք. Երևան	2	Սարմենի 103
76	93353	զորամաս	գ. Քասախ	2	Գևորգ Չաուշի 61
77	95414	զորամաս	ք. Աբովյան	2	Զոնալ կայան
78	94492	զորամաս	գ. Լուսաղբյուր	2	Ղալթախչի/ Լուսաղբյուր
79	94492	բաժին	ք. Դիլիջան	2	ք. Դիլիջան
80	41824	զորամաս	ք. Գորիս	2	Գալստյան 5
81		"Մայր Հայաստան" թանգարան	ք. Երևան	2	ք. Երևան
82	52265	զորամաս	ք. Էջմիածին	2	Խորենացի 18
83	13516	զորամաս	ք. Էջմիածին	2	Իսելեմոպինո փողոց
84	73067	ԿՌԲՀ	ք. Երևան	2	Մուրացան 113
85	14203	հոսպիտալ	ք. Երևան	2	Մուրացան 115
86	88865	հոսպիտալ	ք. Երևան	2	Ք.Երևան, Ադոնցի փողոցի հ.13/21 հասցեում գտնվող Երևան 75 հոսպիտ
87	74352	Սանիտարահամաճարակային	ք. Երևան	2	Արշակունյաց 73Ա
88	73014	Դեղորայքի բազա	ք. Աբովյան	2	Արզնի խճուղի
89	72035	հոսպիտալ	ք. Վանաձոր	2	Վանաձոր քաղաքի Մոսկովյան փողոցի վրա գտնվող թիվ 23 շենք և շինություններ
90	62426	հոսպիտալ	ք. Վարդենիս	2	Վ.Համբարձումյան 93
91	70011	հոսպիտալ	ք. Սիսիան	2	ՀՀ Սյունիքի մարզի Աղիտու համայնքում գտնվող զորամաս
92	17193	հոսպիտալ	ք. Բերդ	2	Ալեք Մանուկյան 25

Համացանցը կրամադրել անխափան, 24 ժամյա, 500 Մբիտ/վրկ սինխրոն (500 Մբիտ/վրկ ելքային և 500 Մբիտ/վրկ մուտքային), երաշխավորված, օպտիկամանրաթելային կապուղով միացված, 64 ռեալ IP:

Կազմակերպել 500Մբիտ/վրկ արագությամբ համացանց Բագրևանդ 5 հասցեում, իսկ մնացած կետերը մեկ ընդհանուր WLAN-ով սահմանված արագություններով Data:

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ծառայությունը նախատեսվում է մատուցել 2019թ. 2-4-րդ եռամսյակների ընթացքում: Ամբողջը դիտարկել որպես մեկ չափաբաժին:

ՀՀ դրամ

Հ/հ	Ստորաբաժանում		Տեղակայում	Արագություն, Մբ/վ	1 Մբ/վ, արժեք ամսեկան	1 Մբ/վ, արժեք տարեկան
1	10037	ՊՆ Համալիր	ք. Երևան	226	2 250	6 102 000
2	19450	ՊՆ ազգային ռազմավարական համալսարան	ք. Երևան	10	2 250	270 000
3	ՏԶԿ	Հանրապետական զինկոմիսարիատ	ք. Երևան	10	2 250	270 000
4	59559	ՊՆ ռազմական ավիացիոն համալսարան	ք. Երևան	10	2 250	270 000
5	24236	ՊՆ Ռազմական համալսարան	ք. Երևան	10	2 250	270 000
6	10724	ՊՆ ռազմական ոստիկանություն	ք. Երևան	10	2 250	270 000
7	95532	Խաղաղապահ զորամաս	ավ. Բալահովիտ	5	2 250	135 000
8	42285	ՊՆ Ենթասպաների դպրոց	ք. Երևան	5	2 250	135 000
9	90999	ԳՇ ստանդարտացման և չափաբանության բաժին	ք. Երևան	2	2 250	54 000
10	22059	ԳՇ ռազմական հաղորդակցությունների բաժին	ք. Երևան	2	2 250	54 000
11	80088	ՌԷՊ զորամաս	ք. Էջմիածին	2	2 250	54 000

12	14746	ՊՆ պահպանման և սպասարկման գունդ	ք. Երևան	2	2 250	54 000
13	14705	ՊՆ ռազմատեղագրական կենտրոն	ք. Երևան	2	2 250	54 000
14	41096	ՌՔԿՊ զորամաս	ք. Էջմիածին	2	2 250	54 000
15		Հասարակական խորհուրդ	ք. Երևան	5	2 250	135 000
16	26338	Մշակույթալուսավորչական միջոցների նորոգման բազա	ք. Երևան	2	2 250	54 000
17	18120	"Լեռնային Հայաստան" առողջարան	ք. Դիլիջան	10	2 250	270 000
18	60925	Ուսումնական զորամաս	ք. Արմավիր	2	2 250	54 000
19	45529	զորավարժարան	ք. Արմավիր	2	2 250	54 000
20	16396	ԲԿ	ք. Գորիս	10	2 250	270 000
21	60369	զորամաս	ք. Գորիս	2	2 250	54 000
22	40861	զորամաս	ք. Կապան	2	2 250	54 000
23	54122	զորամաս	ք. Կապան	2	2 250	54 000
24	54809	զորամաս	ք.Գորիս	2	2 250	54 000
25	28233	ԲԿ	գ. Կարճաղբյուր	10	2 250	270 000
26	52258	զորամաս	ք. Քարվաճառ	2	2 250	54 000
27	75937	զորամաս	բն.Չոփոլու	2	2 250	54 000
28	59016	զորամաս	ք. Վարդենիս	2	2 250	54 000
29	61091	զորամաս	ք. Վարդենիս	2	2 250	54 000
30	25836	զորամաս	ք. Ճամբարակ	2	2 250	54 000
31	20644	զորամաս	Կարճաղբյուր	2	2 250	54 000
32	28418	զորամաս	Կարճաղբյուր	2	2 250	54 000
33	37082	ԲԿ	ք. Վանաձոր	10	2 250	270 000
34	51191	զորամաս	ք. Իջևան	2	2 250	54 000
35	51036	զորամաս	ք. Բերդ	2	2 250	54 000
36	41507	զորամաս	ք. Դիլիջան	2	2 250	54 000
37	28073	զորամաս	ք. Իջևան	2	2 250	54 000
38	27229	զորամաս	ք. Նոյեմբերյան	2	2 250	54 000
39	21127	զորամաս	ք. Մեհրաբ	2	2 250	54 000
40	81151	զորամաս	ք. Դիլիջան	2	2 250	54 000
41	40133	զորամաս	Վանաձոր	2	2 250	54 000
42	63853	զորամաս	Վանաձոր	2	2 250	54 000
43	27527	ԲԿ	ք. Եղեգնաձոր	2	2 250	54 000
44	60913	զորամաս	ք. Սիսիան	2	2 250	54 000
45	30515	զորամաս	ք. Եղեգնաձոր	2	2 250	54 000
46	37564	զորամաս	ք. Սիսիան	2	2 250	54 000
47	50869	զորամաս	ք. Մեղրի	2	2 250	54 000
48	70179	զորամաս	ք. Վայք	2	2 250	54 000
49	28920	ԲԿ	ք. Երևան	10	2 250	270 000
50	95532	Խաղաղապահ զորամաս	ավ. Բալահովիտ	5	2 250	135 000
51	58831	զորամաս	ք. Արարատ	2	2 250	54 000
52	69334	զորամաս	գ.Գուսանագյուղ	2	2 250	54 000
53	43755	զորամաս	բն. Չոբանքարա	2	2 250	54 000
54	32236	զորամաս	ք. Մարտունի	2	2 250	54 000
55	26040	զորամաս	բն. Չոբանքարա	2	2 250	54 000
56	70839	զորամաս	ք. Արթիկ	2	2 250	54 000
57	54850	զորամաս	գ. Մուղնի	2	2 250	54 000
58	83117	զորամաս	ք. Գորիս	2	2 250	54 000
59	32822	զորամաս	ք. Երևան	2	2 250	54 000
60	53661	զորամաս	ք. Գյումրի	2	2 250	54 000
61	55565	զորամաս	ավ. Նուբարաշեն	2	2 250	54 000
62	55076	զորամաս	գ. Լուսակերտ	2	2 250	54 000
63	55035	զորամաս	ք. Գյումրի	2	2 250	54 000
64	51556	զորամաս	ք. Ստեփանավան	2	2 250	54 000
65	15166	զորամաս	գ. Մերձավան	2	2 250	54 000
66	79512	զորամաս	գ. Պռոշյան	2	2 250	54 000
67	45077	զորամաս	ք. Եղվարդ	2	2 250	54 000
68	79209	զորամաս	ք. Գորիս	2	2 250	54 000
69	72207	զորամաս	Թեժ Լեռ	2	2 250	54 000
70	31549	զորամաս	ք. Երևան	2	2 250	54 000

71	24923	զորամաս	ք. Երևան	2	2 250	54 000
72	25149	զորամաս	ք. Երևան	2	2 250	54 000
73	53620	զորամաս	գ. Փամբակ	2	2 250	54 000
74	98360	զորամաս	ք. Երևան	2	2 250	54 000
75	57454	զորամաս	ք. Երևան	2	2 250	54 000
76	93353	զորամաս	գ. Քաստախ	2	2 250	54 000
77	95414	զորամաս	ք. Աբովյան	2	2 250	54 000
78	94492	զորամաս	գ. Լուսաղբյուր	2	2 250	54 000
79	94492	բաժին	ք. Դիլիջան	2	2 250	54 000
80	41824	զորամաս	ք. Գորիս	2	2 250	54 000
81		"Մայր Հայաստան" թանգարան	ք. Երևան	2	2 250	54 000
82	52265	զորամաս	ք. Էջմիածին	2	2 250	54 000
83	13516	զորամաս	ք. Էջմիածին	2	2 250	54 000
84	73067	ԿՌԲՀ	ք. Երևան	2	2 250	54 000
85	14203	հոսպիտալ	ք. Երևան	2	2 250	54 000
86	88865	հոսպիտալ	ք. Երևան	2	2 250	54 000
87	74352	Սանիտարահամաճարակային	ք. Երևան	2	2 250	54 000
88	73014	Դեղորայքի բազա	ք. Աբովյան	2	2 250	54 000
89	72035	հոսպիտալ	ք. Վանաձոր	2	2 250	54 000
90	62426	հոսպիտալ	ք. Վարդենիս	2	2 250	54 000
91	70011	հոսպիտալ	ք. Սիսիան	2	2 250	54 000
92	17193	հոսպիտալ	ք. Բերդ	2	2 250	54 000
	Ընդամենը					

Հաղթող մասնակցի ընտրությունը կատարվելու է՝

հայտերի գնահատումը, համեմատումը և հաղթողի որոշումը իրականացվում է ըստ յուրաքանչյուր միավորի ծառայության գների հանրագումարի, միաժամանակ եթե մասնակցի ներկայացրած յուրաքանչյուր միավորների գները կգերազանցեն տվյալ տողի համար նախատեսված միավորի առավելագույն գինը, ապա մասնակցի հայտը կգնահատվի ոչ շահավետ, եթե առկա կլինի այլ շահավետ առաջարկ: Այլ առաջարկի բացակայության դեպքում սահմանված կարգով կկարվեն բանակցություններ՝ գների նվազեցման շուրջ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ
«ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ

Տնօրեն

Ռ. ՅԻՐԻԿՅԱՆ

Հավելված N 2

N ԳՀԾՁԲ-1/1-1 *ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/Հ	անվանումը	CPV կոդ	Վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ.-ին՝ ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 25.12.2019թ.								
			ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	Ինտերնետային ծառայության մատուցում (համացանցային ծառայություններ մատուցողներ (isp)	72411100/3	4 500 000	5 625 000	6 750 000	7 875 000	9 000 000	10 125 000	11 250 000	12 375 000	13 500 000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՍԲԱՐՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ
«ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ
Տնօրեն

Ռ. ՅԻՐԻԿՅԱՆ

Հավելված 3
N ԳՀԾՁԲ-1/1-1 *ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
N ԳՀԾՁԲ-1/1-1 *ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն